Հաշվետվություն

2018 թվականի մարտի 22-ին Մոսկվայում (Ռուսաստանի Դաշնություն) անցկացված «Կանխարգելում: Օգնություն: Փրկություն:» թեմայով 18-րդ միջազգային գիտագործնական կոնֆերանսի մասնակցության

1. Անունը, ազգանունը.

Տիգրան Պետրոսյան:

2. Զբաղեցրած պաշտոնը.

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի փրկարար ծառայության փրկարարական ուժերի վարչության պետ:

3. Գործուղման վայրը և ժամկետները.

Մոսկվա, Ռուսաստանի Դաշնություն, 2018թ. մարտի 21-ից 22-ը:

4. Հրավիրող կողմը.

ՌԴ ԱԻՆ քաղաքացիական պաշտպանության ակադեմիա:

5. Գործուղման նպատակը.

Մասնակցություն «Կանխարգելում: Օգնություն: Փրկություն:» թեմայով 18-րդ միջազգային գիտագործնական կոնֆերանսին:

6. Քննարկված թեմաները.

Քննարկվել են օրակարգային հետևյալ հարցերը.

- նորմատիվ-իրավական հիմքերի, նորմատիվ-տեխնիկական, մեթոդական բազայի և քաղաքացիական պաշտպանության համակարգի կառավարման կատարելագործման ուղղությունները.

- բնակչությանը վտանգների մասին ազդարարման և տեղեկատվական համակարգերի կատարելագործման և բնակչության պատրաստվածության որակի բարձրացման հիմնահարցերը.

- միջազգային համագործակցության զարգացման, մարդասիրական, սոցիալ-քաղաքական և տնտեսական բաղադրիչների կատարելագործման հարցերը՝ ընդհանուր անվտանգության համատեքստում:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Կոնֆերանսի ժամանակ քննարկվել են.

- քաղաքացիական պաշտպանության ոլորտում պետական քաղաքականության հիմքերի իրականացման հիմնական ուղղությունների նախանշումը.

- ռազմական հակամարտության և արտակարգ իրավիճակների ժամանակ առաջացած վտանգներից ազգաբնակչության, նյութական և մշակութային արժեքների պաշտպանության անհրաժեշտ մակարդակի ապահովման ուղղությամբ առաջարկությունների մշակումը:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Ընդհանուր լիագումար նիստից հետո կազմակերպվեցին թվով 21 թեմատիկ բաժին-հարթակներ, որտեղ հիմնական շեշտադրումները դրվեցին արտակարգ իրավիճակների վերացման ժամանակ վթարա-փրկարարական աշխատանքների հիմնախնդիրների լուծմանը և վթարա-փրկարարական աշխատանքների կատարելագործմանն ու բարելավմանը:

Կոնֆերանսի մասնակիցների հավաքագրված առաջարկությունների և կարծիքների փոխանակման հիման վրա մշակվեց միասնական ամփոփ փաստաթղթ-առաջարկ:

9. Գործուղվողը.

<< արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի փրկարար ծառայության փրկարարական ուժերի վարչության պետ, փ/ծ փոխգնդապետ Տիգրան Պետրոսյան:

10. Ստորագրությունը, ամսաթիվը.

04.04.2018թ.